

Հարազատ եր.
Գրադրութիւն:
Մեղեգագրութիւն:
Եւ. սրբ. Զարգիւթ շարժք:

ԼԵՆ
750

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

1999


ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա. ՊՐԱԿ

ՇԱՏԱԽԻ ՇԱԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Արտատպած «Ազգագրական Հանդեսից»



Թ Ի Ֆ Լ Ի Ս.

Էլեկտրատպած տպարան «Հասկերանո» Երևան, փողոց. № 17.

1914

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆ

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա. ՊՐԱԿ

ՇԱՏԱԽԻ ՇԱԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Արտատպած «Ազգագրական Հանդեսից»



Թ Ի Ֆ Լ Ի Ս.

Էլեկտրոնային տպագրության «Հայկական» Երկրագր. փառոց. № 17.

1 9 1 4

ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԿԻՆ

ՀԱՅԿԱՆՈՅԷ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ

Որպէս հայրենիքի ուսումնասիրութեան

նախամնծախնդրի

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՔՈՎ

Նուիրում է

Երուանդ Լալայեան

ՀՅ 764

4.7.60-60

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

ՇԱՏԱԽԻ ՇԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Վասպուրականում բաւական տարածուած է շալագործութիւնը, ոչ միայն գիւղերում, այլ և Վան քաղաքում կան բաւականաչափ շալագործներ, սակայն շալագործութիւնն ամենից աւելի տարածուած և մանաւանդ կատարելագործուած է Շատախ գաւառի Թաղ գիւղում, և այս այն պատճառով, որ այս գիւղը չափազանց ժայռոտ և վարելահողից զուրկ լինելով՝ չի կարողանում ոչ երկրագործութեամբ և ոչ էլ խաշնարածութեամբ պահել իւր բնակիչներին, կամայ ակամայ պիտի զարգանար մի արհեստ և որովհետև մօտակայ Նորդուզ գաւառի սքանչելի արօտատեղիները մեծ զարկ են տալիս խաշնարածութեան, հետևապէս և՛ այս գիւղացիները մեծ յարմարութիւն ունին հեշտութեամբ ձեռք բերել մեծ քանակութեամբ բուրդ, որից շալ գործել և ծախել ոչ միայն Նորդուզի, այլ և ամբողջ Վասպուրականի բնակիչների վրայ:

Հետևեալ աւանդութիւնը բնորոշում է այս գիւղի տեղագրութիւնը:

Մօքս գիւղից մի հայ մարդ պսակուելիս չէ կամեցել որ իւր կինը, սովորութեան համեմատ, առաջին գիշերը պատկանի գիւղի կալուածատէր քիւրդ բէկին, ուստի խնդրել, աղաչել է, որ բէկը գոնէ չգայ իրենց տուն՝ քանի որ հիւրերը չեն ցրուել և երբ ցրուին, ինքը նշան կըտայ՝ ճրագը հանգցնելով: Բէկը զիջել է և խոստացել համբերել: Գիշերը այս երիտասարդը իւր ջորիների ոտներին պայտեր է խփել, հակառակ կողմը դարձնելով, որպէսզի սրանց հետքից կարելի չլինի ենթադրել, թէ այս տնից հեռացել են, այլ ընդհակառակը եկել են դէպի այս տունը, յետոյ իւր թանգագին իրերը բարձել է ջորիներին ու ճրագը վառ թողնելով՝ իւր նորահարսի հետ փախել, եկել Շատախի հազարացի բէկի մօտ: Այստեղ պատմելով իւր փախտեան պատճառը՝ խնդրել է թոյլ տալ իրեն մերձակայ ժայռերի մէջ բնակու-

թիւն հաստատել, որպէսզի, եթէ Մոքսի բէկը հետապնդի՝ կարողանայ պաշտպանուել: Հագարացի բէկը թոյլ է տուել, և սա դառել է այս գիւղի հիմնադիրը:

Այստեղ Քիւրիկ և Գիւլուկան լեռները միմեանց հանդէպ ցցուելով կազմում են մի փոքրիկ ձորակ, որի մէջ միանում են Տիգրիս և Սիւտըկնայ գետերը: Քիւրիկ լեռը միանգամայն ապառաժ է, ուղղահայեաց, իսկ Գիւլուկանը տերրաւներով իջնում է: Այս տերրաւներից առաջին վրայ կառուցուած է եղել մի ամրոց, իսկ երկրորդի վրայ հին Շատախ գիւղը, ուր այժմ գտնուում է Հեշատ, 6 տնից բաղկացած գիւղը: Այժմեան Թաղ գիւղի տները գլխաւորապէս գետեղուած են Քիւրիկ լեռան լանջին, մինչ միւսի վրայ, մինի կողմը միւսի համար բակ և ճանապարհ ծառայեցնելով: Գիւլուկան լեռան ստորոտում կայ մի փոքրիկ, հարթ տարածութիւն, ուր այժմ կառուցուած է ոստիկանատունը, սրանից փոքր ինչ բարձր տարածուած է մի շատ հին գերեզմանատուն, ուր աւանդաբար ցոյց է տրուում նաև Չար Յուլիանոսի, թերևս սրա մի զօրավարի, գերեզմանը: Գիւղի մէջ կայ չորս փոքրիկ, հասարակ եկեղեցիներ, որոնց շուրջը կան բաւական ընդարձակ գերեզմանատներ: Տիգրիս և Սիւտըկնայ գետերի եզրերին տնկուած են ուռնիներ և բարդիներ, որոնք շատ գեղեցիկ տեսք են ընծայում գիւղին:

Յաճախ Քիւրիկ լեռան գագաթից ձեան հիւսիսը ներքև են գլորում, մեծ փնա պատճառելով գիւղին: Բնակիչները բոլորն էլ հայեր են, մօտ 250 տուն: Ամբողջ գիւղը հազիւ 100 օրավար հող ունենայ, ուստի և հազիւ մի քսան տուն պարապում են երկրագործութեամբ: Շրջակայքում կան լաւ արօտատեղիներ, այնպէս որ մի ժամանակ այստեղ շատերը պարապելիս են եղել խաշնարածութեամբ, այժմ անապահովութեան պատճառով շատերը ծախել են իրենց հօտերը. կան մի քանի փոքրիկ այգիներ, ուր աճում են խնձորի, տանձի, ծիրանի և ընկոյզի ծառեր: Պարտէզներում մշակում են բաւական մեծ քանակութեամբ ձմերուկ և վարունգ:

Բնակիչներից մօտ 140 տուն պարապում են շալագործութեամբ, 50 տուն խանութպանութեամբ, 20 տուն երկրագործութեամբ և 40 տուն էլ շրջիկ մանրավաճառներ են: Մեղուապահութիւնը բաւական տարածուած է, ամենաքիչը 40 տուն կունենան մեղուներ, միայն պահում են հին սիստեմով, այժմ միայն մի փեթակ դրուած է Դատանի ձեռով:

Միայն հինգ տարի առաջ սայլի ճանապարհ շինուեց այս գիւղից մինչև Վան քաղաքը:

Գիւղը մտաւորապէս բաւական բարձր է, այժմ ունի թէ օրիորդաց և թէ տղայոց մի մի ուսումնարան, և գրեթէ բոլոր տղամարդիկ գրագէտ են. նոյն իսկ այստեղի երիտասարդութիւնը «Տիգրիս» անունով մի խմորատիպ շաբաթաթերթ է հրատարակում:

Գիւղի տնտեսական դրութիւնը ընդհանրապէս վատ չէ, որովհետեւ բնակիչները շատ աշխատասէր են և սրանց գործած շալերը մինչև վերջին ժամանակներս շատ լաւ ծախւում են:

Ծերունիների ասելով կտաւ և շալուարի շալ գործելը շատ հին ժամանակից ի վեր սովորական է եղել. միայն մօտ 60 տարի առաջ Չարոի Մուխսի Խլօն, Բնոշ Վարդիկը, և Տէր Պետրոսի լաճ Տէր Մկրտիչը հնարել են մեծ շալ և «ապա» գործելը, որ այժմ ընդհանրացած է գիւղում, և այնքան էլ գոյութիւն տրհեստ չէ, մի տարի աշակերտութիւն անելով կատարելապէս սովորում են:

Շալագործութեան աղղեցութիւնը կայանում է նրանում, որ թէ տղամարդիկ և թէ կանայք շատ լաւ են հագնւում, միայն շալ գործողները հորի խոնաւութեան պատճառով տանջւում են յօգացուից, իսկ գունաւոր շալ գործողներն աչքացաւ են ստանում:

Շալերը գործում են 54 սանտիմետր լայնութեան և 12 մետր երկարութեան, նրանից կարում են տղամարդկանց անդրավարտիկ, կանանց շրջագետ և հոգևորականների համար ֆարաշա: Ոչ միայն Վասպուրականի, այլ և Տաճկաստանի և Ռուսաստանի հայ քահանաներից ու վարդապետներից շատ շատերը իրենց ֆարաշաներն այս կտորից են կարում: Բաւական գեղեցիկ տեսք ունին և դիմացկուն են:

Բացի շալից գործում են նաև «ապա»—վերաբերուի համար կտոր: Շալի թուրը Թաղ գիւղում վաճառւում է 70 դուրուշից մինչև մի ոսկի (5 ր. 60 կ.—8 ր. 60 կ.), Վանում 80 դ. մինչև 115 դուրուշ (6 ր. 40—9 ր. 20 կ.) էջմիածնում 12—15 ր. Թիֆլիսում 15—18 դուրուշ: Ռուսաստան անցկացնելիս մի թուրի համար մաքս են վճարում 90 կոպէկ: Թաղում հաւանականօրէն տարեկան 6—7000 թուր շալ են գործում:

Բ Ո Ւ Ր Դ Լ Ո Ւ Ա Լ.

Սովորաբար բուրդը լուանում են տղամարդիկ, առաւելապէս գետում: Մեծ ոչխարինը երկու մաս անելով, իսկ փոքրինը ամբողջովին թրչում են ջրի մէջ, դնում մի սալքարի վրայ և տիոցով տփում, ձեծում, այնքան որ բուրդը սպիտակում է: Տփոցը 70 սանտիմետր երկարութեան և մօտ 19 սանտիմետր լայնութեան, և 5 ս. հաստութեան մի փայտ է, մի ծայրը, կոթը,

կլորացրած, որ յարմար լինի բռնելու: Երբ ավելուց բուրդը սպիտակում է՝ ձգում են ջրի մէջ և շերտերը բաց անում, որպէս զի լաւ մաքրուի: Ապա ձգում են թուկի վրայ և կամ փռում քարերի վրայ, որ չորանայ:

Այսպէս են լուանում ոչխարի բուրդը, իսկ այծի կեաժը նախապէս ձգում են ջրի մէջ և կոխկռտում, հանում ձմրում և ապա տփում: Առնուազը վեց-անգամ թրջում, մրդում և տփում են: Ամառը կէս, իսկ ձմեռը երկու օրուայ ընթացքում է չորանում, թէ բուրդը և թէ կէաժը:

Ք Ր Ք Ր Ե Լ.

Թէ բուրդը և թէ կէաժը լուանալուց և չորացնելուց յետոյ ձեռքով քրքրում են: Այս աշխատանքը սովորաբար կատարում են կանայք: Նստում են ծալապատիկ, բուրդը կամ կէաժը դնում իրենց ձախ կողմը, ձախ ձեռքով բռնում դեռ ծայրից, իսկ աջով շարունակ քաշում բուրդը և ձգում իրենց առջև: Երբ մօտաւորապէս մի կէս ֆնդաչափ քրքրած են լինում, բոլորը վերցնում են, թեթևակի ոլորում, $1\frac{1}{2}$ —1 մետրաչափ երկարութեան և ապա կծկում՝ իրար վրայ փաթաթում: Այս փաթոյթը կոչւում է քնօլա: Օրական մի կին կամ տղամարդ կարող է մի հոխայից մինչև երեք հոխա (3 ֆունտից-9 ֆ.) բուրդ քրքրել: Հոխա ու կէսը քրքրում են մի դուրուշի (8 կ.), ուրեմն օրական մի կին այս գործով կարող է վաստակել միմիայն 8—16 կոպէկ:

Կ Զ Ե Լ (ԳԶԵԼ).

Բուրդ կամ կէաժ քրքրելուց յետոյ զգում են սանդերքի վրայ բացառապէս կանայք: Սանդերքը ընկոյզի մի տախտակ է 60 սանտիմետր երկարութեան, 30 սանտիմետր լայնութեան և 3 սանտիմետր հաստութեան. սրա ըստ լայնութեան ծայրերից մինը ուղիղ է, միւսը կիսաբոլոր, և վերջանում է մի կլոր մասով, որ յատկապէս բռնելու համար է շինուած և կոչւում է պոչ: Ցախտակի ըստ լայնութեան ուղիղ ծայրի մօտ երկու շարքով խփուած են քառասնական երկաթէ ձողեր՝ 20 սանտիմետր բարձրութեան: Սրանք կոչւում են մատեր: Մատերը միմեանցից կէս սանտիմետր, իսկ մատերի շարքերը $1\frac{1}{2}$ սանտիմետր հեռու են լինում: Մատների ծայրերը սրած են լինում, այնպէս որ կարող են ծակել, ուստի և չգործածած միջոցին սրանց շարքերի մէջ անց են կացնում մի ձող, որ երկու կողմում թևեր ունենալով յանկում է մատների ծայրերի վրայ և ծածկում նրանց: Այս ձողը

կոչւում է սանդերքի բերան կամ դավշան, որ քրդերէն դարձեալ նշանակում է սանդերքի բերան (դաւ=բերան, շան=սանդերք): Սանդերքի գործածութիւնը կատարւում է այսպէս. նստում են ծալապատիկ, մի քար դնում ձախ ոտի մօտ, սանդերքի մատների մասը տնկում այս քարի վրայ, ծունկը դնում սանդերքի պոչի վրայ, որով և անշարժ պահում են նրան: Ապա վերցնում են քնօլանը, երկու ձեռքով բռնում ծայրերից, անցկացնում սանդերքի մատների վրայ և երկու կողմից էլ քաշում. ամեն մի ձեռքում մնում է մի կտոր բուրդ, որ կոչւում է քուռ: Այս բուրդը միմեանց վրայ են դնում, ծայրերից բռնում, կրկին մատների վրայ անցկացնում և կրկին քաշում: Այսպէս կրկնելով 3-4 ան-



Բուրդ գզել

գամ, դնում են մի կողմ, ապա երեքական բուռ վերցնելով թեթևակի ոլորում են միմեանց վրայ, այնպէս որ ստացւում է զլանածե 5-10 սանտիմետր տրամագծով և կէս մետր երկարութեան կանն:

Այս կաննները կրկին անգամ միենոյն ձևով գզում են և աւելի փոքր կանններ շինում: Այս երկրորդ անգամ գզելը կոչւում է ըստկել (մաքրել):

Մի կին օրական կարող է գզել 3-5 նուկի*), նուկին 15 փարայով (3 կ.). ուրեմն կարող է վաստակել միայն 9-15 կոպէկ:

*) Նուկին հաւասար է կէս օխի կամ 641 կրամի և կամ 3 ֆունտի:

Ն Ե Ր Կ Ե Լ.

Բուրդը և կեաժը ներկում են թէ տղամարդիկ և թէ կանայք «գլուզ» կոչուած կարասի մէջ, որ $1\frac{1}{2}$ մետր խորութիւն և մօտ 20 սանտիմետր տրամագիծ է ունենում և թաղում է թոնրի կողքին այնպէս, որ վերջինիս տաքութիւնը թափանցի սրան: Ոմանք՝ չեն թաղում այս կարասը, այլ ներկելիս դնում են մարմանդ թոնրի վրայ: Ոմանք էլ այս կարասի փոխարէն գործ են ածում պղնձէ կաթսայ:

Նախ և առաջ պատրաստում են մի շիջուկ, որի մէջ, որոշ բաներ աւելացնելով ներկում են կանաչ, կապոյտ և մանիշակագոյն: Երկու նուրբ մանրած բորակը (potacium) իւր ծաւալի հինգ չափ ջրով եռացնում են մի կաթսայի մէջ և ապա մի նուրբ կիր աւելացնում, խառնում: Ապա հաւի մի փետուր են ձգում այս բաղադրութեան մէջ և նայում, եթէ ձեռք տալիս թեպուրն անմիջապէս չթափուի, կիրը աւելացնում են, իսկ եթէ թափուած է՝ վերցնում են կաթսան կրակից և թողնում հովանալու: Երբ մրուրը նստում է տակը, զգուշութեամբ ջուրը լցնում են գլուզի մէջ և 3—4 օր թողնում: Յետոյ մի կտաւի քսակի մէջ ածում են 50 դրամ լեղակ և քցում գլուզի մէջ: Երբ քսակը, որ ընկղմուած է լինում գլուզի յատակը, 10—15 օրից յետոյ բարձրանում է երեսը՝ համարում են ներկը պատրաստի, «հասած»:

Կապոյտ գոյնի ներկելիս սպիտակ կանձերը ձգում են վերոյիշեալ բաղադրութեան մէջ և 10—12 ժամ թողնում, ապա հանում, լուանում և չորացնում:

Բաց կապոյտ կամ երկնագոյն ներկելիս կանձերը գլուզի մէջ թողնում են միայն $1\frac{1}{2}$ —1 ժամ, մութ կապոյտ ներկելիս՝ 2—3 ժամ, մութ կապոյտ (լաճվարդ) 8—12 ժամ:

Դեղնագոյն ներկելիս ամեն մի նուրբ կանձի համար 20 դրամ (կամ երկու ձուի քաշ) շիբ լցնում են եռացող ջրի մէջ, կանձերը ձգում մէջը և թողնում 10—15 րոպէ եռալու, ապա հանում են, սառ ջրով լուանում և ձգում մի ուրիշ եռացող ջրի մէջ, աւելացնելով իւրաքանչիւր նուրբ կանձի համար 50 դրամ գեառանկ կոչուած չորացրած բոյսը: Սա առաւելապէս բուսնում է Սպակերտի և Խիզանի կողմերում և չորացրած բերում այստեղ: Սրա նուրբ Շատախում արժէ 7—10 դուրուշ (56—80 կ.): Այս գեառանկի ջրի մէջ կանձերը թողնում են եռ գալու 15—30 րոպէ: Ապա հանում են, սառը ջրով լուանում և չորացնում:

Կանաչ գոյն ներկելիս՝ նախ ներկում են դեղնագոյն և ապա ձգում գլուզի մէջ, թողնելով 1—2 ժամ, նայած թէ ինչ մթու-

թեան երբին են կամենում տալ: Սա ևս սառը ջրով լուանում են և ապա չորացնում:

Այս գոյների են մնում երբ հանում են կանձերը, լուանում և չորացնում, իսկ եթէ կամենում են սեւագոյն դարձնել, ամեն մի նուրբ կանձի համար վերցնում են 40 դրամ կանաչ արջասպ (զաճ, sulfate de fer), ձգում ջրով լի մի կաթսայի մէջ, եռացնում և վերոյիշեալ սրճագոյն կանձերը ձգում սրա մէջ, 1— $1\frac{1}{2}$ ժամ եռացնում, հանում, լուանում և չորացնում: Այսպիսով ստացւում է սև գոյն:

Կարմիր ներկելու համար կանձերը նախ շիջում են, այսինքն մի կէս ժամ ձգում են եռացող ջրի մէջ, ամէն մի նուրբ կանձի համար 20 դրամ շիպ աւելացնելով: Կանձերը հանելիս չեն լուանում, այլ ուղղակի չորացնում են: Ապա ամէն մի նուրբ կանձի համար վերցնում են 20 դրամ յորդան կարմիր (կրմրդ) 40 դրամ թորթիկ (սպիտակ կամ կարմիր գինու մրուր), նախ առանձին առանձին և ապա միասին աղում են, յետոյ տաք ջրով շաղախում և ածում եռացող ջրի մէջ: Այս բաղադրութեան մէջ ձգում են շպած կանձերը ու թողնում եռալու 10—12 ժամ: Այս ջրից մի կաթիլ առնում են եղունգի վրայ և դիտում, եթէ ներկի մասերն այլևս նկատուի չեն, ուրեմն ներկն ամբողջովին քաշուել է կանձերի մէջ՝ վերջիններս հանում են, լուանում և չորացնում: Այսպիսով ստացւում է կարմիր գոյն:

Այս կարմրագոյն կանձերը ձգում են վերև նկարագրուած գլուզի բաղադրութեան մէջ, ուր 2-3 ժամ մնալով դառնում են մանիշակագոյն:

Չիթապտղի գոյնի ներկելու համար ընկուզենու թարմ տերևները ածում են եռացրած ջրի մէջ, մի քիչ արջասպի (զաճի) ջուր աւելացնում և սպիտակ կանձերը ձգում սրա մէջ: Կէս ժամ եռացնելուց յետոյ հանում են, լուանում և չորացնում:

Սև ներկելու համար ամեն մի նուրբ կանձի համար 2 նուրբ ընկուզենու արմատի կեղև մանր բրդում են և լցնում սառն ջրի մէջ ու այսպէս թողնում 2-3 օր: ապա եռացնում են ու կանձերը լցնում են մէջը: Երբ $1\frac{1}{2}$ -1 ժամ են եռացնում, ստացւում է բաց շակամակագոյն (դաւա թիւհի,) իսկ երբ 2 ժամ՝ բաց սրճագոյն (բաց դայֆայի):

Սպիտակ ներկելու միջոցներ չգիտեն, ընտրում են սպիտակ գոյնի բուրդը:

Թ Ե Լ Մ Ա Ն Ե Լ

Կանձերը ներկելուց յետոյ կրկին պզում են, իստկում են ապա թել մանում: Թելը մանում են բացառապէս կանայք և աղջիկներ՝ իլիկով: Իլիկը բաղկացած է պոչից և գլխից. պոչը 20—25 սանտիմետր երկարութեան կոնձակ մի ձող է, որի ամենահաստ ծայրը $1-1\frac{1}{2}$ սանտիմետր տրամագիծ է ունենում: Գլուխը 2-3 սանտիմետր տրամագիծով և $1-1\frac{1}{2}$ սանտիմետր հաստութեան մի փայտէ շրջանակ է, որ ամրացուած է պոչի հաստ ծայրին, որի մէջ ցցած է լինում երկաթէ մի կարթ, որ ծներտ է կոչւում:

Թել մանելիս նախ մի փայտէ ուրիշ շրջանակ, վերոյիշեալ «գլխի» մեծութեան, անց են կացնում պոչի ներքին ծայրին,



Թել մանել

որպէսզի իլիկը դեռ քանի ծածկուած չէ թելով, ծանր լինի, հեշտութեամբ վայր իջնի. երբ բաւականաչափ թել փաթաթած են լինում, այս գլուխը հանում են:

Մանողը մի կանձ բռնում է ձախ ձեռնին, սրանից մի բարակ թել քաշում, անցկացնում իլիկի ծներտի մէջ և ամրացնում, ապա աջ ձեռքով բռնում է իլիկը, դնում աջ ազդրի վրայ և դէպի վեր ուղղում—«կան տալիս»-իլիկը օդի մէջ սկսում է պտոյտ գալ, «ֆուռալ». այս ժամանակ ձախ ձեռքով հետզհետէ բռնում է

կանձը, իսկ աջ ձեռքով կոկում, որ ոլորուելով թել գոյանայ. երբ 2-3 մետրաչափ թել մանուելուց յետ իլիկը դադարում է ոլորուելուց, աջ ձեռքով բռնում են թելը և փաթաթում ձախ ձեռի ցուցամատի և բութ մատի վրայ: Երբ ամբողջ թելը այսպէս փաթաթած են լինում մատներին, թելի ծայրը հանում են ծներտից, աջ ձեռքով բռնում են իլիկի պոչից, և բռի մէջ շարժելով պտըտացնում (ֆուռացնում), միաժամանակ քակելով ձախ ձեռի մատների վրայ փաթաթած թելը, որ փաթաթուած է իլիկի վրայ: Երբ ամբողջ թելը փաթաթուած է իլիկի վրայ, թելի ծայրը կրկին անց են կացնում ծներտի մէջ և կրկին «կան տալիս», ազդրի վրայ ոլորում, ու նոյն կերպ փաթաթում իլիկի վրայ: Յաճախ կանայք կանգնում են կտուրների ծայրերին, որպէսզի իլիկը կտուրից ներքև իջնի և երկար պտտուի:

Մի կին օրական կարող է մանել մի կանձ բուրդ, որի համար առ առաւելը կարող է ստանալ 20 փարա (4 կոպէկ):

Յաճախ կանձերը փաթաթում են «առնոսէկ» կոչուած գործիքի վրայ, որ շինւում է համանուն ծառի ճիւղից: 40—50 սանտիմետր երկարութեան ճիւղը մէջտեղից ձգում են, ապա մի ծայրը կռացնելով ամրացնում են միւս ծայրի հետ, այսպիսով առաջանում է մի ձուլած բացուածք, ուր անց են կացնում ձախ ձեռի չորս մատը, իսկ վերին մասում փաթաթում կանձը: Կայ նաև երկաթից շինած առնոսէկ, որի ծայրից կախուած են մի քանի «փերդ», փուլ, որպէսզի շարժելիս ձայն հանեն:

Խ Ի Ն Ե Լ

Խինում են բացառապէս տղամարդիկ: Սովորաբար դաշտի կամ մի ընդարձակ բակի մէջ տնկում են մի մետր երկարութեան և 2—3 սանտիմետր տրամագիծով ծառի ճիւղեր, որոնք ստէց են կոչւում: Նախ տնկում են վից ստէց, միմեանցից 20-ական սանտիմետր հեռու. սրանցից առաջինը կոչւում է պատըրսպուլիս: Վերջին ստէցից մի մետր հեռու խլուում են երկու ստէց, նոյն ուղղութեան, միայն միմեանցից 30 սանտիմետր հեռու, և ապա 1,30 մետրաչափ հեռու դարձեալ երկու ստէց, միևնոյն ուղղութեան, միայն միմեանցից նոյն, 30 սանտիմետր հեռաւորութեան: Այս վերջինիս նման զոյգ ստէցներ, միևնոյն հեռաւորութեամբ խփում են փոքր շալերի համար 4—5, իսկ մեծ շալերի համար 7—8: Վերջին ստէցը կոչւում է օղզուլիս: Խինելիս գործ են ածում ճաղ:

Ճաղը 30 սանտիմետր երկարութեան մի ճիւղ է, մի ծայրին՝ հինգ սանտիմետր բարձրից՝ նոյնչափ երկարութեան մի ձող

Կարիճի փայտ և Կարիճ: Առաջինը մօտ 15—20 սանտիմետր երկարութեան և $\frac{1}{2}$ —1 սանտիմետր տրամագծով ծառի մի ճիւղ է, կեղևը հանած, որի վրայ թել են փաթաթում այսպէս. նախ թելը կապում են մի ծայրին, մի քանի անգամ փաթաթում, տանում միւս ծայրը՝ այստեղ էլ մի քանի անգամ փաթաթում և ապա այսպէս՝ այս ու այն ծայրը տանելով շարունակ փաթաթում: Այս փաթաթուած թելը կոչւում է կարիճ:

Ասպ անելու գործողութիւնը կատարւում է այսպէս. Ասպի թրի ծայրերին մի մի թել են կապում այնպէս, որ կարելի լինի թրի վրայով առաջ ու յետ տանել: Յետոյ ճիւղը դնում են թրի վրայ և ծայրերը անցկացնում այս կապերի մէջ: Ասպի թրի ձախ ծայրը ասպի ոտից բարձրացնում են և մէքոքը անցկաց-



Մասրա լցնել եւ ասպ անել

նում ասպ-թրի մէջ, և կրկին թուրը դնում իւր տեղը. ճրէի ծամը անց են կացնում մէքոքի վերի ծայրի քարթուածի վրայով, տանում ասպ-թուրի ձախ ծայրի քարթուածի միջով քաշ անում և ծայրին մի քար կապում, որպէսզի այս ծամը լարուած մնայ և կարելի լինի բարձրացնել-իջեցնել: Այս ծամի վրայ է հիւսւում ասպը: Կարիճի թելի ծայրը կապում են թրի աջ կողմը, ծամի վրայ, յետոյ կարիճը թրից փոքր ինչ ցածացնում են և ձախ ձեռի բոյթ ու ճկոյթ մատերը ձգում կարիճի թելի վրայ, յետոյ կարիճը բարձրացնում, անցնակացնում թրի վրայով, իջեցնում

ներքև, անցկացնում ճկոյթ ու բոյթ մատների վերայ առնուած թելի միջով և բարձրացնում մինչև թուրը, որի վրայ հանգոյց է ընկնում. ապա կարիճը անց են կացնում ծամի տակով ու քաշում, որով մի նոր հանգուստ գոյանում է ծամի վրայ. ապա կարիճը կրկին իջեցնում են, ձախ ձեռի ճկոյթ և բոյթ մատներով կրկին բռնում թելը, նորից բարձրացնում, թրի վրայով անցկացնում, տակից բերելով բոյթ և ճկոյթ մատների վրայ ընկած թելի միջով անցկացնում ու քաշում, որպէսզի ճիւղի վրայ հանգուստ ընկնի. ապա կրկին կարիճը ծամի տակով անց են կացնում և քաշում, որով մի հանգուստ էլ ծամի վրայ է ընկնում: Այսպէս շարունակում են, մինչև 36—40 թել անց են կացնում թրի վրայ և այս ժամանակ վեց հանգուստ են ձգում, անցկացնելով կարիճը ծամի տակով, ապա նորից նոյն կերպ շարունակում են գործել. թելերը չհամարելու համար ճիւղի վրայ չորս հաւասար տեղեր նշաններ են անում, որպէսզի այդ տեղերը հասած միջոցին, 36—40 թել արդէն քցած են լինում, այլևս առանց համարելու վեցական հանգուստ ձգեն: Սրանցից իւրաքանչիւրը կոչւում է ոռւկա: Չորս հատ այսպիսի ճիւղ գործելուց յետ՝ միմեանց հետ միացնում են այսպէս. Մի ճիւղ կապում են թրի վրայ, ծամը ձգում, յետոյ արդէն գործած մի ասպը ծամ դնում թրի տակը ու ձախ ծայրը մտցնում թրի վրայի կապի մէջ: Ապա ձախ ձեռի ճկոյթ և մատնամատը անց են կացնում նոյն ճիւղի աջ կողմի առաջին ամբողջ ոռւկի մէջ, յետոյ այս ոռւկի առաջին կրկնակ թելը վերցնում, անց են կացնում ցուցամատի և միջամատի վրայ, աջ ձեռով իջեցնում կարիճը, սրա թելը անցկացնում նոյն ցուցամատի և միջամատի վրայ, բարձրացնում, անցկացնում թրի միւս կողմը և սրա տակից անցկացնելով՝ անցնում ցուցամատով և միջամատով բռնած թելի միջով, ու բարձրացնում վերև, ուր ծամի վրայ հանգուստ է գոյանում: Ապա կարիճը անց են կացնում ծամի տակով, քաշում, այսպիսով մի հանգուստ էլ է գոյանում. ապա կրկին ցուցամատը և միջամատը կոխում են ոռւկի երկրորդ թելի մէջ, կարիճը ցածրացնում, թելն առնում այս յիշած մատների վրայ, կրկին բարձրացնում, անցկացնում թրի վրայով և այս մատների թելի միջով բարձրացնում, որպէսզի ծամի վրայ հանգուստ ընկնի. ապա նորից կարիճը անց են կացնում ծամի տակով, քաշում են, և ծամի վրայ հանգուստ ձգում. իւրաքանչիւր ոռւկան՝ միացնելուց յետ վեց հատ հանգուստ են ձգում, ինչպէս որ դեռ չմիացրած միջոցին ձգած են լինում: Երբ աւարտում են, լաւ հանգուստ են ձգում,

բարձրացնում թրի ձախ ծայրը և հանում ճիւղ, ծամի ծայրը ամրացնում ճիւղի վրայ:

Ա Ս Պ Ք Ա Շ Ե Լ

Ասպ քաշելիս գործադրում են նաև սանտր և սանտրքեշիկ: Սանտրը 4 սանտիմետր երկարութեան, բարակ, հարթ հաւասար շիմշիւրի մօտ 100 ձողեր են, երկու ծայրերն էլ ամրացրած կրկնակ ձողերի մէջ և կաշէ թելով կապած, միմեանցից միայն մի թելի հաստութեան չափ հեռու:

Սանտրքեշիկը մի փայտէ ձող է, մի ծայրին մի քէարթ աւրած:

Երբ չորս հատ կրկնակի ճիւղեր պատրաստած են լինում, ասպ են քաշում: Չորս ճիւղ դնում են միմեանց կողքի այնպէս, որ ամեն մի ուղակ իրեն համապատասխանող ուղակայի հանդէպ կանգնի. յետոյ ներքեից սկսելով առաջին և վերջին ուղակների մօտից իւրաքանչիւր երկու ճիւղ միմեանց հետ կապում են այնքան հեռաւորութեամբ, որ այս կապի մէջ երկու մօտ հեշտութեամբ կարողանան մտցնել: Յետոյ վերեից սկսելով նոյն ուղակներից մի ուրիշ թելով կապում են, և այս, առաջին և վերջին ուղակների թելերը մի ուրիշ հաստ թելով միացնում են, այս վերջինս կոչւում է *ճնճղկայ թել*: Յետոյ ասպի թուրը վերցնում են և ճնճղկայ թելը ձգում ասպի ոտներին, որով ճիւղերը կախւում են ասպի տախտից: Ապա ջրածը բերում, դնում են սրա մօտ, երկու հոգի նստում են ասպի երկու կողքը, միմեանց հանդէպ. մինը երկու մատով վերցնում է նախ առաջին ճիւղի ներքին մասի թելը և կոխում նոյն ճիւղի վերին մասի թելի մէջ, այս միջոցին երկրորդ մարդը, կտրելով ջրածի պատրաստութի առաջին թելը, անց է կացնում արդէն դէպի իրեն մեկնած այդ երկու մատերի մէջ, որը բռնում է և 15 սանտիմետր երկարութեան քաշում ու բաց թողնում. ապա այս կերպ վեցնում են չորրորդ ճիւղի ներքին թելը, անցկացնում նոյն ճիւղի վերին թելի մէջ, առնում ջրածի թելը, յետոյ վերցնում են երկրորդ ճիւղի թելը և վերջը՝ երրորդին: Այսպէս երբ վերջացնում են մի ուղակ, ջրածի թելերը, որ արդէն անցկացրուած են լինում և կոչւում են *դայնա*, երկու մասի բաժանելով միմեանց հետ թեթեակի հանգուստում են: Երբ չորս ուղակն էլ անց են կացնում, սանտրը դնում են երկրորդ և երրորդ ճիւղերի միջև, առաջին մարդը սանտրքեշիկը մտցնում է սանրի առաջին բացուածքի մէջ, իսկ երկրորդ մարդը անց է կացնում սանտրքեշիկի քէարթի վրայ դայնի երկու


թել, առաջին մարդը քաշում է սանտրքեշիկը, որով այս երկու դայնի թելը անցնում է սանրի մէջ. յետոյ սանտրքեշիկը անց են կացնում սանրի երկրորդ բացուածքի մէջ և քաշում երեքական թել և այսպէս շարունակ, վերջին անգամ կրկին երկու թել են անցկացնում: Ապա ամեն մի ուղակայի դայնի թելերը երկու երեք մասերի բաժանելով թեթեակի կապում են և սանրը դարձնում առաջին ճիւղի վրայ, տանում հորի վրայ քաշելու:

Խ Ո Ր

Սա 75 սանտիմետր երկարութեան, $\frac{1}{2}$ մետր լայնութեան և $\frac{1}{2}$ մետր խորութեան մի հոր է, որ շատ անգամ փոքր ինչ եռանկիւնաձև է լինում: Սրա յատակին դրւում են երկու տախտակ, որ ոտի ներքանի մեծութեան կամ փոքր ինչ աւելի մեծ են լինում և կոչւում են *ոտաց տախտակ*: Իւրաքանչիւր ոտացտախտակի չորս ծայրի մօտ էլ կայ մի մի ծակ, այս ծակերից յետինների մէջ անց են կացնում մի բարակ թուկ, 60 սանտիմետր երկարութեան, որ ձգում են հորի յետևի մասում, մօտ 10 սանտիմետր գետնից բարձր ցցած փայտէ ցցին: Այս թուկը կոչւում է *ոտաց տախտակի թել*. Նոյն տախտակի առջևի երկու ծակերից անց են կացնում մի ուրիշ բարակ թուկ, մօտ 1,20 մետր երկարութեան, որը ձգում են փաշալու կոչուած փայտի մէջ տեղի քարտած տեղում, այս թուկը կոչւում է *փաշալի թել*: Փաշալան 20 սանտիմետր երկարութեան և մօտ 3 սանտիմետր լայնութեան մի փայտ է, որի երկու ծայրերին կան երեքակն քէարթ, մէջտեղումն էլ հակադիր կողմից մի ուրիշ քէարթ, որից անց են կացնում փաշալի թելը:

Հորի չորս անկիւնների մօտ խփում են մի մի փայտէ ցից, գետնից մօտ 30 սանտիմետր բարձրութեան. սրանցից յետին երկուսը կոչւում են *սլլմու ցցեր*, սրանց յետի կողքերից մի մի մեծ քէարթ է արած, ուր անց են կացնում *սլմու կակաշը*, առջևի երկու ցցի ծայրերին արած են փոսիկներ, ուր նստեցնում են *մաւարաի* ծայրերը: Այս ցցերը կոչւում են *մաւարի ցից*. մաւարի ցցերից մօտ մի մետր հեռու, միմեանցից փոքր ինչ աւելի մօտ քան մաւարի ցցերը, խփուած են գետնին երկու ցից՝ գետնից մօտ 15 սանտիմետր բարձրութեան, որ կոչւում են *մաւարի ցից*: Սրանց առջևի կողմից արուած են միմի մեծ քէարտ, որի մէջ անց են կացնում մաւարի կակաշները (ծայրերը):

Սլլմին մօտ մի մետր երկարութեան և 10—12 սանտիմետր լայնութեան քառանկիւնի մի փայտ է, ընկուղենու կամ այլ



Շալ գործել

ծառից: Սրա երկու ծայրը կտրած է, մօտ 10 սանտիմետր երկարութեամբ և 5 սանտիմետր տրամագծով, որ կոչւում է սըլմու կակաչ: Այս կակաչներն մտնում են սըլմու ցցի քեառթի մէջ: Սըլմու մի երեսը, մօտ 50 սանտիմետր երկարութեան, 2 սանտիմետր լայնութեան և 7 սանտ. խորութեան փորուած է, և կոչւում է սըլմու փորուածք կամ նետ-տուն: Սըլմու աջ կա-

կաչի մօտ էլ չորս կողմից ծակուած է, այս ծակերը կոչւում են սըլմու աչք, մի ամուր, կլոր փայտ, որ մանիշկ է կոչւում, անց կացնելով աչքերի մէջ, ոլորում են և այսպիսով սըլմին պտտացնում:

Մաւարի ցցերի փոսիկների վրայ յանկում է մաւարան, որ մի մետր երկարութեան և 10 սանտիմետր լայնութեան, 5 սանտ. հաստութեան փայտ է, ուռնուց կամ բարդուց, սրա մէջտեղից մի բարակ թուղի կախում է մի փոքր քար: Մաւարի ցցերի քեառթի մէջ մտցնում են մաւախը, որ մօտ 72 սանտիմետր երկարութեան և 8 սանտիմետր տրամագծով մի կլոր փայտ է, երկու ծայրերը աւելի բարակացած և կլորացրած. սրանք կոչւում են կակաչ: Հորի վերև, պատի վրայ խփում է մի փայտէ ցից, որ կոչւում է քեամկի կոռ, սրանից մի մետր դէպի ձախ դարձեալ խփում է մի ուրիշ ցից, որ կոչւում է ըռնցից (բռն ցից):

Հորի վերև 3—4 մետր, կամ տան խանութի բաձրութեան վրայ, պատին, խփում է երկու ցից և սրա վրայ յարմարացրած մի մաւախ, որ կոչւում է սարի մաւախ: Այս սարի մաւախի վրայ անց է կացրած մի երկար թուղ, որի մի ծայրը կոչւում է ըռնցից, իսկ միւսը ջրացից:

Սարի մաւախից մի մետրաչափ դէպի առաջ, հորի ուղիղ մէջտեղի վրայ, առաստաղից կախում են երկու կրկնակի թելեր, սրանցից առաջին զոյգը կոչւում է ասպի թել, որոնց ծայրերին անցնակացրած միմի ճախարակ, որ կոչւում են ճնճղուկ: Սրանք կարելի է բարձրացնել, կամ ցածրացնել հաւու ոտ կոչւած ուշ կորի շնորհիւ՝ որ կապում է ճախարակը գրկող կաշու միջով անցնող թուղի ծայրին, որը ամրացնում են նոյն թուղի վրայ. երկրորդ կրկնակի թելը կոչւում է դըֆի թել և սրանցից կախում է դըֆէն:

Դըֆէն բաղկացած է երկու փայտերից, որոնցից մինը կոչւում է ներքեւակ, միւսը վերեւակ: Երկուսն էլ միմեանց հաւասար երկարութեան են լինում, մօտ 50—60 սանտիմետր: Ներքեւակը մօտ 15 սանտիմետր լայնութեան է լինում, և 10 սանտիմետր հաստութեան, սրա վերեւակն էլ նոյն հաստութեան է, միայն աւելի լայն, և վերի մասը սապատած, որպէսզի հեշտութեամբ կարելի լինի սապատի երկու կողմերից բռնել: Այս երկու փայտերի միջև ձգւում է մի փոսիկ, որ կոչւում է դըֆի գէտ, իսկ ծայրերին կան միմի ծակ, ըլլճմի ծակ, որոնց միջով անց են կացնում մի մի ձողիկ, որը կոչւում է ըլլճմա. երկու ներքին և վերին ակերի միջև, դըֆի գէտի մէջ անց են կացնում սանրը և երկու կողմից թելով կապում:

այս թելերը կոչւում են լրդկամ (սանձ), վերին աղի բլճմանքի աչքերի մօտ կան նաև միմի ծակ, որտեղից կապում են դըֆի այն թելերը, որոնք կախուած են առաստաղից: Այս ծակերի մօտից կապուած են մի մի թել, որ կոչւում են սանրի լակոտ, որոնք անցնում են սանրի ծայրերից և նրանց ամրացնում դըֆի վերի գետի մէջ: Մի խորի տաղգեահը շինում են 1—2 ոսկիով (9—18 ր.):

Մաքիւքը պատրաստում են գոմշի եղջիւրից: Սա լինում է մօտ 25 սանտիմետր երկարութեան, և 8 սանտիմետր թանձրութեան. երկու կողմից հետգհեաէ բարականում է և վերջանում սուր ծայրերով, որոնք պատուում են երկաթով: Այս եղջիւրի մէջ տեղում մօտ 10—15 սանտիմետր երկարութեան և 5 սանտիմետր լայնութեան բացուացք են բաց անում, որ կոչւում է իլիկտուն. սրա մի կողմում մի քեարթ են անում, և վերևից առիշեղ ծակում, հանդիպակաց կողմն էլ մի փոսիկ են անում: Իլիկ կոչուած երկաթի ձողի վրայ անց են կացնում թել փաթաթած մասրան *), իլիկը մտցնում մաքիւքի իլիկտունը, ծայրը կոխում փոսիկի մէջ, միւս ծայրը յանկում քեարթի մէջ և առիշեղ ծակից մի բեռ անցկացնելով արգիւում, որ իլիկը դուրս գայ, ապա իլիկտան կողքին արած ծակից, որ թելի աչք է կոչւում, անց են կացնում մասրաի թելի ծայրը: Որպէսզի մաքիւքը ծանր լինի, մի քանի տեղ ծակում են և արճիճ լցնում:

ՆԱԶԻՔ ԱՆԵԼ

Մանած թելը իլիկի վրայից փաթաթում են նազիւքի վրայ: Նազիւքը մի փոքր տախտակ կամ կոճղ է, որի վրայ ամրացրած է մօտ կէս մետր բարձրութեան մի ձող. սրա վերևի և ներքևի ծայրերին անց են կացրած մի մի հատ, միմեանց խաչաձև կըտրող երկական ձող, որ հեշտութեամբ կարող են պտոյտ գալ: Վերևի և ներքևի այս խաչաձև ձողիկների ծայրերը միացած են միմեանց հետ մի մի ձողով, որ թև են կոչւում:

Իլիկի թելը կապում են նազիւքի մէկ թևի վրայ, ձախ ձեռքում բռնում իլիկը, աջ ձեռքի մատով դարձնում նազիւքը, որով թելը փաթաթում է նազիւքի վրայ: Նազիւքի վրայ փաթաթում մի, երկու կամ երեք իլիկի թելը կոչւում է կամ:

*) Մասրան ընկուղենու մի բարակ ճիւղ է, մօտաւորապէս 10—15 սանտիմետր երկարութեան, և մէջը ծակ:

ՄԱՍՐԱ ԼՅՆԵԼ

Եթէ շալի համար է կաժը՝ թրջում են, իսկ եթէ ասպի համար է՝ չոր չոր ձգում նազիւքի վրայ: Կաժի ծայրը բռնում են ձախարակի իլիկի վրայ անցկացրած մասրի վրայ և ձախարակը մանելով՝ թելը փաթաթում վերան, յետոյ այս մասրան անց են կացնում մաքիւքի իլիկի վրայ և թելի ծայրը հանելով մաքիւքի ծակից՝ (աչքից) գործում:

ՋՐԱԾԸ ՔԱՇԵԼ ԽՈՐ.

Ասպի թելերը անց են կացնում ճնճղկների վրայ, հանգուտած դայանները անց են կացնում սըլմունետի վրայ, նետը մտցնում են սըլմի նետ-տունը, երեք փայտէ բեռներով ամրացնում, ջրածը անցկացնում մալախի տակից և կապում սարի մալախի շերտից և ծայրը տալիս մի աշակերտի և կամ կապում են մի քարից, որ կոչւում է աշկերտքար. ապա ջրածի կապուածը սկսում են տարածել մալախի վրայ. այս գործողութիւնը կոչւում է խատխատել: Մալախի վրայ պարզելուց յետոյ այս հիւսուածքը առաջ ու յետ են ձգում, մինչև որ նա պարզուած է նաև սարի մալախի վրայ, այս վերջին գործողութիւնը կոչւում է ուլոր խալնել: Նորից մալախի մօտ 4—5-ական թել առնելով տանում մալախի աջ կողմը միմեանց կից դնում են, որպէսզի թելերը միմեանց հետ չխառնուին, այս գործողութիւնը կոչւում է խատխատել:

Ապա աշկերտքարը հանում են, կամ աշակերտի ձեռքից առնում են խորի շրիտը, անցկացնում քամկի կոռից և կապում բռնեցըցից: Վարպետը նստում է հորի մօտ, ոտները կախում հորի մէջ, սըլմին դնում իւր գիրկը, սըլմու աջ կողմը մի ծակից անցկացրած կրկնակի թելը, որ 15 սանտիմետր երկարութիւն ունի և կոչւում է սըլմու թել, առնում է աջ ձեռի ցուցամատի և միջամատի մէջ, ապա առաջի դայանէն մըտցնում է այս երկու մատների մէջ, քաշում և այսպիսով այս առաջին դայանէն առնում է նոյն երկու մատների վրայ, և նորից երկրորդ դայանէն առնում այս մատների մէջ, այսպէս շարունակ շալի բերանը քաշելով՝ վերջին դայանի միջից անց է կացնում սըլմու ձախ կողմն անց կացրած թելը ու հանգուտում: Ապա ջրածը ասպի մէջ տեղից բաժանում է երկու մասի և ջրածը բարձրացնելով մալախէն անց է կացնում իւր ցցերի վրայ այնպէս, որ մալախի մէջտեղից կախուած քարի թելը դայ ջրածի երկու բաժանուած տեղը:

Ապա մանիշկը անցկացնելով սըլմի աչքի մէջ, պտտեցնում է այնքան, որ ջրածը ձգւում է՝ «կը կքի»։ Ապա աջ փաշաւի փայտն անց է կացնում յետևի ասպի վաւրի թելերի մէջ, իսկ ձախ փաշաւի փայտը առջևի ասպի վաւրի թելերի մէջ։ Վարպետը իւր ձախ ոտը դնելով ոտաց տախտակի վրայ՝ սխմում է, որով առջևի ասպերը վայր են իջնում, յետևի ասպերը բարձրանում, այսպիսով ջրածի մէջ բացուածք է գոյանում։ Բարձրացրած ասպը յառաջ է քշում և աջ ոտը դնելով ոտաց տախտակի վրայ սեղմում է, որով յետևի ասպը վայր է իջնում և առաջի ասպը բարձրանում, որով և ջրածի մէջ բացուածք է գոյանում, այս ասպն էլ յառաջ են քշում մինչև միւս ասպը։ Սանրը ասպից 8 սանտիմետր հեռու է մնում։ Ապա սանրը մտցնում է դըֆայի մէջ և ծայրերը լըխկամ կոչուած թելերով կապում, և բըլըմաները անցկացնում ծակերի մէջ։

Վերցնում են մըքիւքը, թելն արդէն փաթաթած, աջ ոտը խփում են, ջրածը բացւում է, այս բացուածքի միջով անց են կացնում մաքիւքը, ապա ձախ ոտը խփում և դըֆէն առաջ բաշելով խփում, որ այս թելը ամրանայ։ այս միջոցին ջրածը կրկին բացւում է, մաքիւքը կրկին անց են կացնում, աջ ոտը կրկին խփում, դըֆէն խփում և այսպէս շարունակ։ Երբ այսպիսով մի ձեռնաշափ գործում են, այս գործուածքի վրայ անց են կացնում մըթիթը, որպէսզի շալի թելերը ձգուելով սանրի ատամները չկոտորին։

Մըթիթը մօտ 20 սանտիմետր երկարութեան և 3 սանտիմետր լայնութեան մի հասարակ փայտ է, որի մէջը մի սանտիմետր խորութեամբ փորուած է։ Մըթ մի ծայրին կապուած է մի թել, իսկ միւս ծայրին՝ խփուած է 3 հատ երկաթէ թելեր։ Մի նոյնչափ երկարութեան ձող էլ, մի ծայրին 3 երկաթէ թելեր են խփած, իսկ միւս ծայրին մի քանի (սովորաբար 3) քարդ արած։ Այս երկու փայտերի ծայրերը ամրացնում են շալի ծայրերին, և ապա միւս ծայրերը միմեանց մօտ բերելով թելը ձգում են մի քեարդի մէջ։ Որպէսզի ջրածի թելերը կտրուելիս հեշտ լինի որոշել, թէ որն է և որ թելի հետ պիտի կապել՝ անց են կացնում ծոց-ստէցներ։ Աջ ոտը սեղմում են, մի ստէց անց կացնում ջրածի մէջ և տանում մինչև մաֆարի փայտը, յետոյ ձախ ոտն են սեղմում և երկրորդ ստէցն անցկացնելով տանում նրա մօտ։ Մաւարից կապուած մաւարի քարը առաջին ստէցի տակից և երկրորդի վրայից անցկացնելով՝ քաշ են անում հորի մէջ, որ ստէցները առաջ չգան։

Հ Ա Լ Կ Ո Ր Ծ Կ Լ Խ Ե Լ

Երբ շալը գործելիս աւարտելու են լինում՝ ջրածի օղզուլի ծայրը, որ կապուած է լինում խորի շերտին, քանդում են, իւրաքանչիւր դահնան երկու մասի բաժանելով իւրաքանչիւրը առնում են ցուցամատի ու միջամատի վրայ, անցկացնում իրեն, դահնի, վրայ և այսպիսով օղակ կաղմելով ձգում ձկոյթ և մատանիմատի վրայ։ Երբ այսպէս բոլոր դահնաները օղակ են ձգում, մատերից հանում են այս օղակները և անցկացնում մի փայտէ ձողի վրայ, որ «կործ գլոխ» է կոչւում։ Ապա այս օղակները լաւ պարզում են ձողի վրայ, յետոյ ձողի երկու ծայրից ձգում ճոխ չուանը (կրկնակ թոկ), որի միւս կրկնակի ծայրից ամրացնում են խորի շերտը, որ անցնելով սարի մալախի և քամկի կոռի վրայով կապուած է բռնէցիցից։ Այս անում են, որպէսզի ջրածի այս ծայրը ևս գործուի, մինչդեռ առաջ այս ծայրը հաւաքուած էր և հարկաւոր էր պարզել։

Հ Ա Լ Կ Տ Ր Ե Լ

Երբ շալն ամբողջովին գործում են և մնում է միայն 15 սանտիմետրաչափ առանց գործելու, հանում են դըֆէն սանրի վրայից, սանրը և ասպը յետ քշում, որ կպչի գործուածքի գործ-գլխին և սկսում են շալի թելերը միառմի կտրել, և հանդուստել սանրի առջև, որպէսզի սանրը դուրս չգայ։ Այսպէս ամբողջը կտրելուց յետոյ, շալը փաթաթում են, և վերցնում լուանալու և կոճ տալու համար*), իսկ ասպը և սանրը դէպի ձգած հանդուստներն են քաշում, ջրածի մնացած օղակները կտրում, ու ասպը հանում են ներքևից փաշաւաններից և վերևից ճնճղուկներից և տանում անց կացնում երեք ոտ կոչւած փայտի վրայ, պատրուսելու համար։

ՊԱՏՐՈՒՄԵԼ

Վերցնում են ասպը և սանրը միասին, որոնց մէջ մնացած է գործուած շալի դայնէն, և սանրը յենելով նրեք ոտ**) գործի-քի երկու ոտի վրայ՝ ասպի ճնճղի թելերը միմեանց հետ կապում են և անց կացնում երեք ոտի գլխից։ Ասպի սանրի կողմի զոյգ ճիւղերը վայր են իջեցնում, միւս զոյգը վեր բարձրացնում,

*) Շալի սըլմի կողմի ծայրը կոչւում է առջի բերան, իսկ վերջի կտրուածքը՝ վերջի բերան։

**) Սա մօտ կէս մետրաչափ երեք ճիւղերից բաղկացած փայտ է։

որպէսզի գործուածքը բացուի: Ասպի վարի փաշաւի թելերից անց են կացնում երեք ոտի երրորդ ոտից կապուած թելը և տանում նոյն երեք ոտի առաջին ոտին ամուր կապում, որպէսզի ասպը «կրքի»,—ամբանայ երեք ոտի վրայ: Ապա վերցնում են ջրածի պատրուսգլխը, և նրա թելիքի օղակները առնում են ձախ ձեռի ցուցամատի և միջամատի մէջ, այնպէս որ ջրածի թելերը մատների միջև ընկնում են խաչաձև: Ապա աջ ձեռով սկսում են մէկ, մէկ առնել իւրաքանչիւր օղը (երկու թելը), կտրել վերի թելը, հանգուտեւ ասպի դայնայի վերին թելի հետ, իսկ միւս, վարի թելը, հանգուտեւ նոյն դայնայի վարի թելի հետ: Հանգուտեւից յետոյ, հանգուտեւ մատների մէջ ոլորելով յըղկում են, որպէսզի յետոյ ասպի և սանրի միջով հեշտութեամբ անցնի: Երբ դայնի մի որևէ թելը կտրուած է լինում, նրա համապատասխանող ջրածի թելը բաց են թողնում, որպէսզի յետոյ խորի մէջ իւր ասպի և սանրի մէջ քաշեն: Երբ բոլոր թելերը այսպէս հանգուտեւում կամ պատրուսում են դայնաների թելերի հետ, երեքոտի վարի երեք թելը քանդում են, ասպը և սանրը վերցնում երեքոտի վրայից և զգուշութեամբ դայնաներից քաշում են այնպէս՝ որ նոր հանգուտած թելերն անցնեն ասպի և սանրի միջով, 5 սանտիմետր երկարութեամբ: Ապա քաշում են խորի վրայ:

Մեծ շալի և ասպի պատրուսն էլ միևնոյն ձևով են անում:

Շ Ա Լ Կ Ո Տ Ր Ե Լ

Շալը գործել վերջացնելուց յետ ձգում են գետնին, մի ծայրից լէնքսին ծալում, ծալած մասը դնում կղակի տակ՝ կզակով բռնում և երկու ձեռքով շալը սեղմելով կրծքին՝ ծալուած մասը կոտրում և կզակի տակից ծայրը հանելով՝ կէս մետրաչափ ծալում ու կրկին սրա ծայրը դնում կզակի տակ, մնացածը նոյն ձևով ծալում ու կոտրում: Երբ ամբողջն այսպէս ծալում են, ամբողջը նորից վայր են ձգում, արդէն լանքսին ծալուած երկու ծայրերից վերցնում, անում են երկու տակ, երկու տակն անում չորս տակ և այսպէս շարունակ մինչև ստացւում է $1\frac{1}{2}$ մետրաչափ մի փաթոյթ. ապա տանում դնում են մի քարի տակ, որ կտրանն առնի, 10—15 րոպէից յետոյ վերցնում են այսպիսի երկու շալ, միասին դնում ջրի մէջ և թողնում 8—10 ժամ. ապա տանում գետեզր, դնում մի սալի վրայ և տփոցով տփում, նորից ջրի մէջ թռչում, նորից տփում, յետոյ բաց են անում ամբողջ փաթոյթը և գետի մէջ մի լաւ ցայում, ապա լանքսին ծալած անում են

երկու տակ, ապա չորս տակ, ութ տակ ևն. յետոյ բերում են տուն: Այստեղ մի մաքուր տեղ բաց են անում փաթոյթը, առաջի ծայրը դնում մի տախտակի վրայ, շալի միւս մասը ձգում իրենց ոտի տակ, ու ձգելով փաթաթում տախտակի վրայ մինչև շալի կէսը, ապա այս փաթաթած մասը դնում են վայր, շալի միւս ծայրը վերցնում, փաթաթում մի ուրիշ տախտակի վրայ՝ մնացած մասը ոտների տակ առնելով. երբ այս կէսն էլ փաթաթում են, երկու փաթոյթները միմեանց վրայ են բերում և թոկով կապում:


Այսպիսի երկու կամ աւելի շալեր միմեանց հետ ամուր կապում են տախտակների դուրս եկած ծայրերի վրայ, և ապա ձգում ջրով լի կտթսայի մէջ և եռացնում $1\frac{1}{2}$ —1 ժամ: Յետոյ եռացրած ջրից հանում են և տանում կոճ տալու:

Կ Ո Ճ Տ Ա Լ

Կոճը մի ընկուզենու կամ խնձորենու և կամ տանձենու բուն է $1\frac{1}{2}$ —2 մետր երկարութեամբ, և 40 սանտիմետր տրամագծով: Այս կոճի մէջտեղում փորուած է 40 սանտիմետր եկարութեան և 20—25 սանտիմետր լայնութեան մինչև միւս կողմը, միայն և երկարութեան աջ ու ձախ կողմերը ոչ թէ ուղղակի են իջնում, երկարութեան աջ ու ձախ կողմերը ոչ թէ ուղղակի են իջնում, այլ փոքր ինչ առ ի շեղ, այնպէս որ ներքին մասի բացուածքը առնուազը 15—20 սանտիմետր աւելի նեղ է: Այս երկարութեան երկու ծայրերում դնում են մի մի տախտակ, որ կշտանոց են կոչւում: Եփուած շալը դնում են երկու կշտանոցների միջև, իւրաքանչիւր կշտանոցի և կոճի միջև դնում են փայտէ մեծ սեփեր, իրիկ, և ահագին փայտէ մուրճով (օթակով) տփում, մինչև պեր, իրիկ, և ահագին փայտէ մուրճով են կոճին: 24 ժամ այս կոճը մէջ որ սեպերը հաւասարւում են կոճին: 24 ժամ այս կոճը, մէջ թողնելուց յետոյ, փինչերն հանում են, շալը վերցնում, տանում փոռում, մի քիչ չորացնում, ապա ծալքը բաց անում, երկտակ, չորս տակ և ութ տակ անելուց յետոյ երկու ծայրերը միմեանց մօտ են բերում և մի անգամ ևս ծալում, տանում դնում մի քարի տակ, որ իւր «ծախ առնի»: Սրանից յետոյ արդէն շալը պատրաստ է և կարելի է գործածել կամ ծախել:

Ն Խ Շ Ո Ւ Ն Շ Ա Լ Գ Ո Ր Ծ Ե Լ

Նշխուն շալ գործելիս, եթէ ուզում են երկու երեսի վրայ էլ նշխեր միատեսակ դուրս բերել՝ երբ մի ոտը սղմում են, առանձին առանձին մաքուրներով անց են կացնում գունաւոր թելերը այնպէս՝ որ միմեանց կից եղող գունաւոր թելերը նախ քան անցնելը միմեանց հետ փաթաթուին: Երբ բոլոր թելերն



Կոճ խփել

արդէն այս ձևով անցկացրած են լինում, դըֆէն խփում են և նոյն կերպ թելերը անցկացնում: Եթէ այսպէս գործելիս տեղ տեղ ուզում են ծաղիկներ շինել, ձեռով բարձրացնում են ասպի բարձր մնացած կրկնակ ճիւղերից դէպի դըֆէն եղած ճիւղ, միւսը իջեցնում, որով մէկմէկ շերտ թել բարձրանում է և սրանից որ թելերի վրայ որ ուզում են, անց են կացնում գունաւոր թելեր և ապա դարձեալ ձեռով ցածրացնում են բարձրացրած ճիւղը,

ոտը կոխում են որ այս կրկնակ ճիւղերը վայր իջնին և միւս կրկնակ ճիւղերը բարձրանան, որից յետոյ անմիջապէս դըֆէն խփում են, ու այսպէս շարունակում:

ԴԻԳԻԻՐ ՇԱԼ ԳՈՐԾԵԼ

Երկերես, դիւզիւր, շալ գործելիս ասպի չորս ճիւղ թելերը ոչ թէ սովորական ձևով երկերկու են ամրացնում ոտաց երկու տախտակներին, այլ ամեն միսն առաձին, չորս ոտաց տախտակների վրայ և գործելիս նախ խփում են առաջին ճիւղը կապուած տախտակին, յետոյ չորրորդը կապուած տախտակին, ապա երկրորդը և հուսկ յետոյ՝ երրորդը:

ՄԵԾ ՇԱԼԻ ԵՒ ՓՈՔՐԻ ԳՈՐԾԵԼՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Մեծ շալի հորը և դազգեանը միանգամայն նման են վոքը շալի հորին ու դազգեանին, միայն նրանից աւելի մեծ են և սրա դըֆէն ոչ թէ առաստաղից է կախուած, այլ դըֆի դազգեանից, որ երկու ցցերի վրայ ամրացած մի փայտ է:

ԱՊԱ ԳՈՐԾԵԼ


Ապա գործելու դազգեանը տարբերում է շալի դազգեանից նրանով, որ աւելի մեծ է լինում. 1 մետր 80 սանտիմետր լայնրանով, որ աւելի մեծ է լինում. 1 մետր 80 սանտիմետր լայնրանով, որ աւելի մեծ է լինում. 1 մետր 80 սանտիմետր լայնրանով, որ աւելի մեծ է լինում. 1 մետր 80 սանտիմետր լայնրանով, որ աւելի մեծ է լինում:

Ասպը բազկացած է երկու կրկնակի ճիւղերից, և ոչ չորս: Գործելիս ալ ոտը խփում են, առէջքը բացում է, մարիւքը անց են կացնում և յետոյ աջ ձեռով այս ձգուած թելը մշտեղից «մատ կուտան», այսինքն թելը առաջ են քշում մինչև դըֆէն, ապա ձախ ոտն են խփում, դըֆէն առաջ քաշում և այսպէս շարունակ:

Ա Պ Ի Ա Ռ Է Չ Ք Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ

Գործիքը.—Մի փայտէ մեծ ճախարակի առջև կանգնեցնում են երկու միմեանց կից ձողեր, որ յանկում են երկու ոտների վրայ: Այս երկու ձողերի միջև շարուած են 40 հատ փոքրիկ անուակներ, որոնք ամրացրած են երկաթէ բարակ թելերի վրայ, որոնց միայն մի ծայրը դուրս գալով ձողից կարթի ձև է ստանում,

անուակի շուրջը փորուած է: Այս անուակներէից իւրաքանչիւրի վրայով անցնում է մի ամուր լար, որ պատում է ճախարակի անիւը, այնպէս որ պտտացնելիս այս 40 անուակներն էլ միասին դառնում են, անուակները կոչւում են բրբրա, սրանց ծայրի կարթը՝ ծներդ, ճախարակի անիւը՝ գունտ: Մի փայտէ կոճից բաղկացած ոտի վրայ ամրացրած է մի ուրիշ ձող, որի վրայ խփուած են 40 հատ կարթեր: Այս ձողը դնում են ճախարակի հանդէպ, գործուելիք ապաի երկարութեան հեռաւորութեամբ, մօտաւորապէս 6—12 մետր, ապա մի վարպետ, որ սովորաբար տղամարդ է լինում, վերցնում է արդէն առէջք հանած թելը, որ փաթաթուած է լինում նազիւքի վրայ, այս թելի մի ծայրը հանգու-



Ապի առէջք

տում է ճախարակի 40 կարթերից վերջինի վրայ, ապա այն թելը տանում ձգում է դիմացի ձողի երկու կարթի մէջ ու բեթում ճախարակի երկու կարթի մէջ ձգում, և նոյն գործողութեամբ շարունակում մինչև որ ճախարակի կարթերը լցուին, թիւնը շարունակում մինչև որ ճախարակի կարթերը լցուին, և այս ժամանակ թելը կտրում կապում է կարթից: Ապա ճախարակի կարթերից անցկացրած օղ թելերը կտրում է և մէկ մէկ կապում նոյն ծներտներից: Ապա սկսում է ճախարակը դարձնել, որով բոլոր թելերը մանւում են, որից յետոյ ճախարակի թելերը որով մէկմէկ ծներտներից հանելով բոլի մէջ հաւաքում է և 20 նորից մէկմէկ ծներտներից հանելով բոլի մէջ հաւաքում է և 20 հատը միասին մի հանգուտ ձգում ու ամրացնում ճախարակի


վերջին ծներտի վրայ. ապա գնում է միւս ձողի մօտ, աջ ձեռի բոյթ մատը անցկացնում այս թելերի մէջ և հանում կարթերից, իսկ ձախ ձեռը անցկացնում նոյն թելերի մէջ, ներքեից, խաչփակ, խաչաձև, այսինքն երբ մի թել ընկաւ ձեռի երեսին, երկրորդը պիտի ընկնի բոլի մէջ, երրորդը երեսին, չորրորդը բոլին ևն. այսպէս հաւաքելուց յետոյ բոլթ մատի վրայ ժողոված թելը անց են կացնում գետնին խփած մի, ձախ ձեռին մի ուրիշ, ցցի վրայ: Ապա կրկին գալիս են ճախարակի մօտ, հանում վերջի կարթից թելերը և ձգում մի, դարձեալ գետնին խփած ցցի (ստէցի) վրայ: Այս մէկ անգամից ոլորած թելը կոչւում է երկու պուրակ, այսպէս ոլորած 16 պուրակը կոչւում է մի առէջք:

Երբ մի ամբողջ առէջք պատրաստուած է լինում, ճախարակի կողմի պուրակներն սկսում են հաւաքել ձեռքի վրայ խաչփակ անելով և թելով կապում են, յետոյ այս խաչփակի բացուածքը ձգելով մինչև թելերի կէսը՝ կրկին կապում են մի թելով, ապա միւս գլխի երկու խաչփակն էլ կապում ու սրա խաչփակի բացուածքը մինչև առէջքի կէսը բերելով կրկին կապում են: Ապա օղակաձև փաթաթում են ու վերցնում, տանում ներկելու:

ԱՊԻ ԱՌԷՉՔ ՆԵՐԿԵԼ

Վերցնում են մի բուռ գխտոր, լաւ մանրում, 300 գրամ ջրի մէջ եռացնում, ապա առէջքը թաթախում սրա մէջ, ըստանում են դեղին գոյն: Յետոյ վերցնում են մի բուռ արձասպ, տրորում 300 գրամ ջրի մէջ և արդէն դեղնագոյն առէջքը թաթախում այս ջրի մէջ, որով ստանում է սև գոյն: Ապա սառը ջրով լուանում են և առանց չորացնելու տանում պատրսում են, ապա գործում:





Ե. ԼԵԼԵՅԵՆԻ

ԱՌԱՆՁԻՆ ԳՐԳՈՎ ԼՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Զաւախքի բուրմունք	25 կ.
2. Զաւախք	1 ռ.
3. Վարանդա	1. ռ. 20 կ.
4. Սիսիան	80 կ.
5. Զանգեզուր	50 կ.
6. Գանձակի գաւառ ա. հատոր	80 կ.
7. » » ռ. հատոր	80 կ.
8. Բուլանըխ (հաւաքեց Բենաէ)	1 ռ. 50 կ.
9. Ժողովրդական առակներ՝ Ա. Մոլլա Նասր-էղ-ղին	25 կ.
10. Ժողովրդական առակներ՝ Բ. Հորոս	5 կ.
11. Սամայ ծոեր	25 կ.
12. Վասպուրական Ազգագրութիւն	60 կ.
13. » Նշանաւոր վանքեր	60 կ.
14. Վասպուրականի բանահիւսութիւնից Ա. պրակ	1 ռ.
15. » » Բ. պրակ	40 կ.
16. Վասպուրականի Ասորիները	30 կ.
17. Վասպուրականի տնայնագործութիւնը	20 կ.
18. Ծիսական կարգերը Հայոց մէջ	25 կ.
19. Լուսանկար արում Վայոց Ձորի	100 ռ.
20. » » Նոր-Բայազէտի գաւառի	100 ռ.
21. » » Վասպուրականի երկու հատ.	120 ռ.
22. Գունաւոր քարտէզ Հին-Նախիջևանի և Շարուր Դարաւագեազի գաւառների	30 կ.
23. Գունաւոր քարտէզ Նոր-Բայազէտի գաւառի	30 կ.

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍՆԵԼՈՒ

24. Հին-Նախիջևանի գաւառ	
25. Վայոց Ձոր	
26. Բորչալուի գաւառ	
27. Նոր-Բայազէտի գաւառ	
28. Վասպուրականի Զեռագիրների ցուցակը	

Դիմել՝ Ерванду Лалаянцъ. Тифлисъ, Лермонтовская 1.

ՀՀ Ազգային գրադարան



NL0240378

